2022

ԾԱՅՐԱՀԵՂ ԱՋ ՊՈՊՈՒԼԻՍՏԱԿԱՆ ՀՈԵՏՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱԿԱԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ

Հեղինակ՝ ԷԴԳԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Ծայրահեղ աջ պոպուլիզմի առանձնահատկությունները 5

Ծայրահեղ աջ պոպուլիզմը Եվրոպայում 7

Ծայրահեղ աջ պոպուլիզմի առանձնահատկությունները Էստոնիայում, Լատվիայում, Ուկրաինայում, Մոլդովայում եւ Վրաստանում 8

Ծայրահեղ աջ պոպուլիստական հայաստանյան դիսկուրսի առանձնահատկությունները եւ նարատիվները 11

Հայաստանյան ԾԱՊ գերիշխող դիսկուրսի հիմնական թիրախները 12

Հայաստանյան ԾԱՊ դիսկուրսի էթնոնացիոնալիստական, նեյթիվիստական տարրերը 13

Հայաստանյան ԾԱՊ գերիշխող դիսկուրսի հակադեմոկրատական, հակաազատական տարրերը 15

Հայաստանյան ԾԱՊ գերիշխող դիսկուրսի պոպուլիստական տարրերը 16

Հայաստանյան ԾԱՊ գերիշխող դիսկուրսում առկա դավադրությունների տեսություններին բնորոշ նարատիվները 17

Հայաստանյան ԾԱՊ գերիշխող դիսկուրսի հիմնական նարատիվը 19

Հակաժողովրդավարական տարբեր դրսեւորումների վերաբերյալ մոտեցումները միջազգային ասպարեզում 20

Ատելության խոսքի դեմ պայքարի օրենսդրական կարգավորումները ՀՀ-ում 27

Եզրակացություններ եւ առաջարկություններ 28

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ հանրային քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակ/ների տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Ներածություն

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ծայրահեղ աջ (անգլալեզու գրականությունում հիմնականում օգտագործվում է «far-right», «extreme right», «radical right» տերմինները) հռետորաբանությունը շարունակում է մեծ տեղ զբաղեցնել բազմաթիվ երկրների, այդ թվում կայացած ժողովրդավարական պետությունների հանրային-քաղաքական կյանքում: Հատկանշական է, որ նման հռետորաբանություն որդեգրածների շրջանում մեծ ակտիվություն են ցուցաբերում ծայրահեղ աջ պոպուլիստական (ԾԱՊ) խմբերը:

Հայաստանում ԾԱՊ հռետորաբանությունը, որը միշտ էլ մեծ տեղ է ունեցել հայաստանյան սոցիալական, քաղաքական, մշակութային կյանքում եւ հանդիսացել է «էթնոազգայնական», «էթնոհայրենասիրական» դիսկուրսի բաղկացուցիչ մաս, նոր կյանք ստացավ 2018թ. թավշյա հեղափոխությունից հետո որպես վերջինիս հակադրվող երևույթ:

Սույն հետազոտությունում դիսկուրս մեթոդի միջոցով ուսումնասիրվել է 2021թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակահատվածում հայաստանյան մեդիա տիրույթում արտացոլված ծայրահեղ աջ պոպուլիտական բնույթի տեքստերը: Ուսումնասիրության է ենթարկվել «Իրավունք» թերթի էլեկտրոնային տարբերակում 2021-ի հունիսի 1-18-ը ընկած ժամանակահատվածում զետեղված բոլոր տեքստերը: Թերթի էլեկտրոնային տարբերակի ընտրությունը պայմանավորված է հետեւյալ հանգամանքներով՝ նախ, թերթը առանձնանում է վառ ընդգծված ծայրահեղ աջ բնույթի խմբագրական քաղաքականությամբ: Բացի այդ, ելնելով թերթի գաղափարախոսական կողմնորոշումից եւ քաղաքական նախասիրություններից այն առատորեն զետեղել է ծայրահեղ աջ բնույթի հայտարարություններ, որոնց հեղինակներն են տարբեր հասարակական, քաղաքական գործիչներ եւ կազմակերպություններ, այդ թվում, ընդդիմադիր դիրքերից հանդես եկող ընտրությունների հիմնական մասնակից քաղաքական ուժերը եւ վերջիններիս ներկայացուցիչները: Այդպիսով, «Իրավունք» թերթի էլեկտրոնային տարբերակը փաստացի հանդիսանում է ծայրահեղ աջ պոպուլիստական շեշտադրումներ պարունակող հայաստանյան տեքստերի յուրօրինակ հավաքածու: Այս աղբյուրի ուսումնասիրումը թեեւ բավարար չէ հայաստանյան ծայրահեղ աջ պոպուլիստական դիսկուրսի ողջ սպեկտրը բացահայտելու համար, սակայն բավարար է հայաստանյան դոմինանտ ծայրահեղ աջ պոպուլիստական դիսկուրսը բացահայտելու տեսանկյունից, քանի որ էլեկտրոնային թերթում, ինչպես արդեն նշել ենք, ծայրահեղ աջ պոպուլիստական դիրքերից հանդես եկողների թվում առատորեն ներկայացված են նաեւ խորհրդարանական ընդդիմադիր երկու ուժերի առանցքային ներկայացուցիչների տեքստերը (ելույթներ, հոդվածներ, սոցիալական ցանցերում գրառումներ):

Ի հավելումն վերոնշյալ աղբյուրի ուսումնասիրվել է նաեւ առերեւույթ ծայրահեղ աջ հռետորաբանություն որդեգրած արտախորհրդարանական քաղաքական ուժերից մեկի՝ «Զարթոնք» ազգային-քրիստոնեական կուսակցության նախընտրական ծրագիրը:

Ուսումնասիրվել են հակաժողովրդավարական քարոզչության եւ համապատասխան վարքի տարբեր ասպեկտներին վերաբերող մի շարք միջազգային կազմակերպությունների, եվրոպական երկրների համապատասխան ատյանների մոտեցումները: Ուսումնասիրության հիման վրա, հաշվի առնելով հայաստանյան կոնտեքստը, մշակվել են Հայաստանում հակաժողովրդավարական տարատեսակ դրսեւորումների դեմ պայքարի քաղաքականության առաջարկներ: Ուսումնասիրված միջազգային փորձը եւ ներկայացվող առաջարկները չեն վերաբերում միայն ծայրահեղ աջ պոպուլիզմի դեմ պայքարին: Վերջինիս դեմ պայքարը տեղավորվում է հակաժողովրդավարական տարատեսակ կոնկրետ դրսեւորումների (ատելության խոսք, հակադեմոկրատական, հակաազատական քարոզչություն, ապատեղեկատվության տարածում, խտրականության արդարացում, քսենոֆոբիա, ռասիզմ եւ այլն) դեմ պայքարի լայն շրջանակներում:

Ծայրահեղ աջ պոպուլիզմի առանձնահատկությունները

Ի տարբերություն աջ ծայրահեղականների (էքստրեմիստների), որոնք, որպես կանոն, բացահայտ թիրախավորում են դեմոկրատական ինստիտուտները եւ հաճախ դիմում են պայքարի բռնի մեթոդների օգտագործմանը, ծայրահեղ աջ պոպուլիստները (անգլ. far-right populists կամ right-wing populists) ֆորմալ առումով գործում են հիմնականում ժողովրդավարական խաղի կանոնների շրջանակներում: Սակայն ծայրահեղ աջ պոպուլիստները հաճախ օգտագործում են դեմոկրատական ինստիտուտները եւ մեխանիզմները ազատականության, պլյուրալիզմի դեմ պայքարելու նպատակով, այդպիսով դառնալով լիբերալ-դեմոկրատական պետությունների «ներքին» ժամանակակից մարտահրավերներից մեկը: Բրիտանական «Չեթամ հաուսի» (Chatham House) հետազոտության համաձայն եվրոպական վերնախավը ներկայացնող հարցվածների 45%-ը համարում է, որ Եվրամիության համար գլխավոր սպառնալիքը պոպուլիստական եւ հակաեվրոպական կուսակցություններն են[1]:

Պոպուլիզմը, որը Քեմբրիջի համալսարանը 2017թ. հռչակել էր որպես տարվա բառ, հաճախ, առօրյա կյանքում, օգտագործվում է որպես ամբոխահաճության (դեմագոգիա) հոմանիշ: Սակայն ժամանակակից ակադեմիական գրականությունում եւ, առնվազն, արեւմտյան մեդիայում, պոպուլիզմը հիմնականում դիտարկվում է որպես յուրօրինակ «նեղ» գաղափարախոսություն: Մասնավորապես լայն տարածում է ստացել հոլանդացի քաղաքագետ Քաս Մուդդեի սահմանումը, ըստ որի՝ պոպուլիզմը «նեղ» (thin), այսինքն ոչ ինքնաբավ, միայն «մեծ» գաղափարախոսություններից մեկի հետ միասին գոյություն ունեցող գաղափարախոսություն է, համաձայն որի հասարակությունը բաժանված է երկու միատարր և հակամարտող խմբերի՝ «մաքուր ժողովրդի» և «փչացած էլիտայի»: Ըստ պոպուլիստական հռետորաբանության, քաղաքականությունը կոչված է արտահայտելու այդ «մաքուր ժողովրդի» համընդհանուր կամքը[2]: Սակայն այստեղ պետք է նշել, որ պոպուլիստները ժողովրդի կազմի մեջ ամենեւին չեն ներառում բոլոր քաղաքացիներին: Ինչպես նշում է Յան-Վերներ Մյուլլերը, պոպուլիստների գլխավոր պնդումն այն է, որ նա, ով չի սատարում պոպուլիստական կուսակցությանը չի հանդիսանում իրական ժողովրդի մասը[3]:

Քանի որ, ինչպես արդեն նշել ենք, պոպուլիզմը ինքնաբավ գաղափարախոսություն չէ, ապա տրամաբանական է նրա ներկայությունը քաղաքական սպեկտրի ձախ եւ աջ հատվածներում, ինչպես նաեւ կենտրոնում: Հարկ է նշել, որ պոպուլիզմի տեսակներից հիմնականում ծայրահեղ աջ պոպուլիզմն է համարվում լիբերալ-դեմոկրատական պետությունների հիմնական սպառնալիքներից մեկը: Մեր հետազոտությունում մենք անդրադառնալու ենք ծայրահեղ աջ պոպուլիստական հայաստանյան գերիշխող դիսկուրսին:

---

[1] Raines Th., Goodwin M., Cutts D. The Future of Europe: Comparing Public and Elite Attitudes. London: Chatham House, 2017. P. 31.

[2] 'The Populist Zeitgeist', Government and Opposition, Mudde, C., Vol.39, Issue 4, Autumn 2004.

[3] Мюллер Ян-Вернер, Что такое популизм? ВШЭ, 2016, стр. 20

Քաս Մուդդեն նշում է, որ ծայրահեղ աջ պոպուլիզմը այնպիսի գաղափարախոսություն է, որը համատեղում է առնվազն երեք հատկություն՝ նեյթիվիզմ, ավտորիտարիզմ եւ պոպուլիզմ[4]: Ինգլհարթն ու Նորիսը ծայրահեղ աջ պոպուլիզմի հատկանիշներից են համարում զսպումների և հակակշիռների, ինչպես նաև փոքրամասնության իրավունքների նկատմամբ հակակրանքը, բազմամշակութայնության փոխարեն մոնոմշակույթի նախընտրումը, փակ սահմաններ նախընտրելը, պահպանողական արժեքները[5]:

Հետազոտողները նաեւ նշում են, որ ծայրահեղ աջ պոպուլիզմի առանձահատուկ գծերից է կոնսպիրոլոգիական մտածողությունը, խնդիրներ լուծելու վոլյունտարիստական մոտեցումը՝ միջազգային իրավունքի, սահմանադրական նորմերի հաճախակի անտեսումը «հանուն ժողովրդի շահերի»[6]:

«Պոպուլիզմ» գրքի հեղինակ Փոլ Հոգարթը նշում է, որ պոպուլիստական հռետորաբանությանը (իրականում խոսքը հատկապես ծայրահեղ աջ պոպուլիզմի մասին է) բնորոշ է որոշակի սոցիալական խմբերի դեմոնիզացիան[7]: Այլ կերպ ասած, ծայրահեղ աջ պոպուլիստական հռետորաբանությանը բնորոշ է ատելության խոսքին դիմելը: Ատելության խոսքը թիրախավորում է մարդկանց եւ խմբերին ըստ նրանց ինքնության որեւէ հատկանիշի՝ լինի դա սեռը, ազգությունը, սոցիալ-մշակութային նախասիրությունները, թե քաղաքական հայացքները:

Հարկ է նշել նաեւ, որ տարբեր երկրների ծայրահեղ աջ պոպուլիզմի ընդհանուր տարրերից է ծայրահեղ հակալիբերալականությունը եւ հակագլոբալիզմը:

Անկախ բոլոր հանգամանքներից ժողովրդավարական պետությունների եւ միջազգային կառույցների կողմից առաջ է քաշվում այն գաղափարը, որ անհրաժեշտ է պայքարել հակաժողովրդավարական, հակաազատական տարբեր դրսեւորումների դեմ, ինչը նշանակում է նաեւ ծայրահեղ աջ պոպուլիզմի տարբեր դրսեւորումների դեմ պայքարի անհրաժեշտության շեշտադրում: Սակայն, ինչպես ցույց կտանք հետագայում, առաջարկվող պայքարը միագիծ չէ եւ վերջինիս բովանդակության եւ ձեւերի առումով գոյություն ունեն տարբերակված մոտեցումներ:

---

[4] Mudde, C. Populist radical right parties in Europe. Cambridge University Press. 2007.

[5] Inglehart, R.F. & Norris, P. 'Trump, Brexit, and the Rise of Populism: Economic Have-Nots and Cultural Backlash', HKS Faculty Research Working Paper Series, RWP16-026, August 2016.

[6] Vossen K. Populism in the Netherlands after Fortuyn: Rita Verdonk and Geert Wilders Compared. Perspectives on European Politics and Society, 2010, vol. 11, №1. P. 24.

[7] Taggart, P. Populism, Open University Press, P. 94

Ծայրահեղ աջ պոպուլիզմը Եվրոպայում

Այս բաժնում երկրորդական աղբյուրների հիման վրա կանդրադառնանք Եվրոպայում ծայրահեղ աջ պոպուլիստական նարատիվներին: Առանձին եւ ավելի մանրամասն կներկայացնենք Բալթյան երկրների եւ Արեւելյան գործընկերության երկրներից՝ Ուկրաինայի, Մոլդովայի եւ Վրաստանի աջ պոպուլիստական դիսկուրսների հետ կապված առանձնահատկությունները:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ գոյություն ունեն ինչպես ընդհանուր, այնպես էլ երկրից երկիր տարբերվող ծայրահեղ աջ պոպուլիստական առնաձնահատուկ նարատիվներ: Օրինակ, Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի աջ պոպուլիստների թիրախում գտնվող օբյեկտների ցանկը ավելի մեծ է, քան Արեւմտյան Եվրոպայի երկրներինը: Եթե վերջիններում թիրախում են հայտնվում հիմնականում ազգային փոքրամասնությունները, ապա առաջիններում նաեւ մշակութային եւ սեռական փոքրամասնությունները[8]: Ի դեպ, Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրների ծայրահեղ աջ պոպուլիստների գաղափարախոսական տարրերից են ռեվանշիզմը, անջատողականությունը եւ դեպի «ավանդական արժեքներ» վերադարձի գաղափարը[9]: Օրինակ, ինչպես նշում է Օսկոլկովը, լեհական ԾԱՊ-ին բնորոշ հատկություններից է «լեհականությունը»՝ կաթոլիկության, սուվերենության, արյան, հողի համադրումը[10]:

Ըստ էստոնական ԾԱՊ «ԷԿՐԷ» կուսակցության առաջնորդ Մարտին Հելմեյի՝ «Գեյերը, իմիգրացիան, լիբերալ դոգման» պարտադրվում են էստոնացիներին, իսկ վերջիններիս, ըստ նրա, խորթ են իրենց տոլերանտությամբ առանձնացող արեւմտյան լիբերալիզմի գաղափարները, որոնք սպառնալիք են էստոնական ինքնության համար:

Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանը թիրախավորել է Ջորջ Սորոսին եւ նրա հիմնադրած «Բաց հասարակություններ» հիմնադրամին, այն պատրվարկով, որ նրանք պաշտպանում են «լիբերալ էլիտայի», այլ ոչ թե «իրական ժողովրդի» շահերը:

Ֆրանսիացի ծայրահեղ աջ պոպուլիստ Մարին ԼԸՊենը հայտարարել է, որ ձախ-աջ դիխոտոմիան իր տեղն է զիջել «գլոբալիստների» եւ «հայրենասերների» հակամարտությանը:

Առանձին ուսումնասիրության համար առանձնացրել ենք նախկին սոցիալիստական ճամբարի մաս կազմող երկրներին վերաբերող հետեւյալ երկու ուսումնասիրությունները՝ 2013-ին իրականացված «Համեմատելով ծայրահեղ աջ պոպուլիզմը Էստոնիայում եւ Լատվիայում» եւ 2021-ին հրապարակված

---

[8] Տես, օրինակ՝ Осколков П.В. Правый популизм в Европейском Союзе, Ин-т Европы РАН, 2019, стр. 276

[9] Նույն տեղը, 277

[10] FitzGibbon J., Guerra S. Not Just Europeanization, Not Necessarily Populism: Potential Factors Underlying the Mobilization of Populism in Ireland and Poland. Perspectives on European Politics and Society, 2010, vol. 11, №3. P. 279

«Աջակողմյան պոպուլիզմը ասոցացման երկներում. Ժողովրդավարության սպառնալիք» հետազոտությունները:

Ծայրահեղ աջ պոպուլիզմի առանձնահատկությունները Էստոնիայում, Լատվիայում, Ուկրաինայում, Մոլդովայում եւ Վրաստանում

«Համեմատելով ծայրահեղ աջ պոպուլիզմը Էստոնիայում եւ Լատվիայում» աշխատությունից պարզ է դառնում, որ Էստոնիայի եւ Լատվիայի ծայրահեղ աջ պոպուլիստական դիսկուրսում վառ ընդգծված են ռուսաֆոբիան եւ «բրյուսելաֆոբիան» (վերջինս ավելի շատ բնորոշ է էստոնական դիսկուրսին) որպես տեղային նեյթիվիզմի յուրօրինակ դրսեւորումներ: Ռուսաստանը՝ որպես ԽՍՀՄ իրավահաջորդ եւ Բրյուսելը՝ որպես Եվրամիության բյուրոկրատիայի կենտրոն, դիտարկվում են երկրի սուվերենությունը սահմանափակող, «մաքուր» էթնո-ազգային պետություն ունենալու համար գոյաբանական սպառնալիք հանդիսացող սուբյեկտներ:

Նշվում է նաեւ, որ դիսկուրսի բաղկացուցիչ մաս է դարձել նաեւ իսլամաֆոբիան: Ընդհանուր առմամբ, դիսկուրսում շեշտը դրվում է էթնիկ մաքրության պահպանման կարեւորության վրա: Օրինակ, լատվիական կուսակցություններից մեկի ծրագրում ասվում է, որ լատվիացիները տանը պետք է զգան, որ իրենք ապրում են իրենց էթնիկ հայրենիքում: Նշվում է նաեւ, որ դիսկուրսում առկա է նաեւ հակասեմականությունը, սակայն այն ավելի անուղղակի կերպով է դրսեւորվում: Օրինակ, թիրախավորվում է Սորոսի հիմնադրամը, որն, ըստ պոպուլիստների, վերացնում է լատվիացիների ինքնությունը եւ անկախությունը եւ տարածում է կոսմոպոլիտ արժեքներ: Հետազոտությունում նշվում է, որ, օրինակ, լատվիական ԾԱՊ դիսկուրսում ավտորիտարիզմը դրսեւորվում է 20-րդ դարի 30-անների Լատվիայի բռնապետ Կարլիս Ուլմանիսի գովաբանմամբ: Աշխատությունում նաեւ նշվում է, որ հատկապես Լատվիայի ԾԱՊ դիսկուրսում առկա են պոպուլիզմի հիմնական գաղափարը «մաքուր» ժողովրդի եւ կոռումպացված էլիտայի հակամարտության մասին եւ որ կոռումպացված էլիտայի դերում շատ հաճախ դիտարկվում է Ջորջ Սորոսը, որն իբր ցանկանում իշխանության գալ Լատվիայում:

«Աջակողմյան պոպուլիզմը ասոցացման երկներում. Ժողովրդավարության սպառնալիք» հետազոտությունը անդրադառնում է Ուկրաինայի, Մոլդովայի եւ Վրաստանի ծայրահեղ աջ պոպուլիզմի հետ կապված խնդիրներին, այդ թվում ներկայացնում է, թե ինչպիսի՞ն է վերոնշյալ երեք երկրներում աջ պոպուլիստական դիսկուրսը:

Ուկրաինայի համապատասխան դիսկուրսի հետ կապված նշվում է, որ դրանում մեծ տեղ ունի սուվերենության եւ իդենտիկության խնդիրը, որը շոշափվում է

հեղափոխության եւ ռուսական ագրեսիայի կոնտեքստում: Նշվում է, որ աջ պոպուլիստները կապիտուլյացիա են դիտարկում Ռուսաստանի հետ որեւէ կոմպրոմիս: Սակայն, հետազոտությունից հստակ չէ, արդյոք իդենտիկության խնդիրն ունի, այսպես ասած, էթնիկ կամ նեյթիվիստական բնույթ (երբ ինքնությունը կապվում է կոնկրետ էթնոսին պատկանելիության հետ), ինչը որոշակիորեն բարդացնում է նման օրինակները որպես հենց ծայրահեղ աջ պոպուլիստական երեւույթներ դիտարկելը:

Ուկրաինական դիսկուրսի կարեւոր մաս է կազմում հոմոֆոբիան, գնչուների նկատմամբ անհանդուրժողականությունը, որը տեղավորվում է փողոցներում ուկրաինացիների արդար կարգ ու կանոն հաստատելու մասին ավելի մեծ նարատիվի շրջանակներում:

Հետազոտությունում նշվում է, որ ուկրաինական աջ պոպուլիստական հռետորաբանությունում չի քննադատվում եվրոինտեգրացիոն քաղաքականությունը: Այն ավելի շուտ դիտարկվում է որպես եվրոպական քաղաքակրթության մաս լինելու գործընթաց, այլ ոչ թե նաեւ բրյուսելյան բյուրոկրատիայի մաս կազմելու ուղղություն:

Ըստ հետազոտության, ուկրաինական աջ պոպուլիստական դիսկուրսում վառ ընդգծված է նաեւ հակակոռուպցիոն հռետորաբանությունը՝ ըստ պոպուլիստների կոռումպացված էլիտաների համակարգը պետք է փոխարինել իրենց պատկերացված համակարգով քանի որ միայն իրենք են ներկայացնում ժողովուրդի շահերը: Սակայն նաեւ նշվում է, որ այս հռետորաբանությունը շատ հազվադեպ է վերածվել կոնկրետ ռազմավարության եւ գործողությունների մշակմանը:

Հետազոտությունում նշվում է նաեւ, որ թեեւ որոշ աջ պոպուլիստներ օգտագործում են նեոնացիստական խորհրդանիշներ եւ հռետորաբանություն, սակայն հիմնական աջ պոպուլիստները չունեն նեոնացիստական իդենտիկություն: Խոսվում է նաեւ այն մասին, որ կան նաեւ պրոռուսական աջ պոպուլիստներ, որոնց նարատիվները բնականաբար տարբերվում են ընդհանուրից՝ նրանք հանդես են գալիս սլավոնական երեք ժողովուրդների՝ բելառուսների, ռուսների եւ ուկրաինացիների մեկ ընտանիքով հանդես գալու օգտին, նրանք կողմնակից են Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավմանը, ռուսաց լեզվի դիրքերի ամրապնդմանը եւ այլն:

Մոլդովական ծայրահեղ աջ պոպուլիստական դիսկուրսին, համաձայն վերոնշյալ հետազոտության, բնորոշ է ատելության խոսքը, որն առաջին հերթին ուղղված է սեռական փոքրամասնություններին, ԼԳԲՏ համայնքին: Նշվում է, որ տարածվում են կեղծ ուղերձներ «գեյերի ամուսնության օրինականացման», «երեխաների որդեգրման» թեմաներով: Աջ պոպուլիստները շահարկում են «ավանդական ընտանիք», «ուղղափառ արժեքներ» հասկացությունները: Նշվում է նաեւ, որ ռուսական ուղղափար եկեղեցու դիրքերի ուժեղացման թեզերի կողմնակիցները ակտիվորեն ներգրավված են հակա ԼԳԲՏ-ական պոպուլիստական դիսկուրսում:

Հետազոտությունից պարզ է դառնում, որ հակաէլիտիստական հռետորաբանությունը հաճախ զուգորդվում է «ուժեղ ձեռքի» անհրաժեշտության ավտորիտար խոսույթով: Նշվում է նաեւ, որ համապատասխան պոպուլիստական դիսկուրսում քաղաքացիական հասարակությունը, մեդիան բնութագրվում են որպես «Արեւմուտքից գնվածներ», «գրանտակերներ»: Նշվում է, որ մոլդովական

պոպուլիստական դիսկուրսում առկա է ոչ լիբերալ եվրոպական երկրներում տարածում ունեցող հակասորոսական նարատիվները ինչպես նաեւ Ռուսաստանից ոգեշնված «արտասահմանյան գործակալների» մասին դիսկուրսը:

Վրաստանի աջ պոպուլիստական դիսկուրսին անդրադառնալիս նշվում է, որ օրինակ, «Վրացական երազանք» կուսակցությունը հայտարարում է, որ չնայած քաղաքականությունը կեղտոտ բան է, սակայն մարդիկ պետք է ներգրավվեն դրանում որպեսզի չթույլատրեն անբարոյական էլիտաներին յուրացնել իշխանությունը: Նշվում է, որ նման դիսկուրս առաջ քաշող ուժերը ավելի շատ փնովում են «ժողովրդի թշնամիներին» քան առաջարկում են լուծումներ:

Զեկույցում նշվում է, որ չնայած միգրանտների փոքր քանակի, դիսկուրսում առկա է հակամիգրանտական հռետորաբանություն: Օրինակ, վրացական աջ պոպուլիստական ուժերից մեկը հայտարարել է, որ 30-40 տարի հետո վրացիները փոքրամասնություն են կազմելու Վրաստանում, խորհրդարանը դառնալու է մուսուլմանական, վարչապետը դառնալու է մուսուլման:

Վրաստանյան համապատասխան դիսկուրսում մեծ տեղ ունի նաեւ հակա-ԼԳԲՏ-ական շեշտադրումները եւ որպես «ժողովրդի ձայն» էնթնոնացիոնալիստական տերմիններով ներկայանալու միտումը: Նշվում է նաեւ, որ ըստ աջ պոպուլիստների վրացական իդենտիկության անբաժան մասն է հետերոսեքսուալ կողմնորշումը եւ ուղղափառ քրիստոնեությունը եւ որ «իսկական» վրացիներին ուղղված սպառնալիքը գալիս է էթնիկ, կրոնական, մշակութային «ուրիշներից»: Աջ պոպուլիստական վրացական դիսկուրսում լիբերալիզմը դիտարկվում է որպես բռնապետության նոր ձեւ, որը փոքրամասնությունների իրավունքը գերադասում է «ժողովրդի» իրավունքին: Վրացական աջ պոպուլիզմին բնորոշ է նաեւ եվրոսկեպտիցիզմը, տարբեր միջազգային կազմակերպությունների հասցեին ուղղված քննադատությունը: Հետազոտությունում նշվում է նաեւ, որ վրացական աջ պոպուլիստներից շատերը հաճախ են մեղադրվում պրոռուսական հայացքների համար եւ որ նրանք վերհասկվում են Ռուսաստանի կողմից:

Ծայրահեղ աջ պոպուլիստական հայաստանյան դիսկուրսի առանձնահատկությունները եւ նարատիվները

Այս բաժնում մեծ քանակի ուղղակի խոսքի մեջբերումների եւ դրանց՝ ըստ ծայրահեղ աջ պոպուլիզմի հիմնական բաղադրիչների դասակարգման միջոցով կներկայացվեն մեր վերլուծությունն առ այն, թե ինչպիսի՞ն է ծայրահեղ աջ պոպուլիստական գերիշխող դիսկուրսը Հայաստանում, որո՞նք են այդ դիսկուրսի հիմնական շեշտադրումները, թիրախները, թեմաները, լեզվաբանական առանձնահատկությունները, քարոզչական գործիքները:

Մեր հետազոտությունից կարող ենք հետեւություն անել, որ ծայրահեղ աջ հռետորաբանությունը Հայաստանում հաճախ դրսեւորվում է հենց ծայրահեղ աջ պոպուլիզմի տեսքով: Ուշադրության արժանի փաստերից է, որ հետազոտված նյութերում ծայրահեղ աջ պոպուլիստական հռետորաբանության տարբեր տարրեր օգտագործած մեկնաբաններն (քաղաքական գործիչներ, լրագրողներ, լրատվամիջոցներ, հրապարակախոսներ, փորձագետներ, հասարակական գործիչներ) ունեցել են ծայրահեղ հակակառավարական եւ «հակաթավշյա հեղափոխական» դիրքորոշում:

Հետազոտված տեքստերում առկա են եղել ծայրահեղ աջ հռետորաբանությանը բնորոշ բոլոր հիմնական տարրերը: Դրանցից շատերը բնորոշ են ոչ միայն ծայրահեղ աջ պոպուլիզմին, այլ նաեւ այլ գաղափարախոսական, հասարակական-քաղաքական հոսանքներին, ինչպիսիք են՝ ֆաշիզմը, նացիոնալ-սոցիալիզմը, աջ էքստրեմիզմը, իսլամական ֆունդամենտալիզմը եւ այլն:

Մեր աշխատությունում մենք չենք նշում, թե ովքեր են այս կամ այն արտահայտության, տեքստի հեղինակները՝ մեր հետազոտության ուղղակի նպատակների մեջ չի ներառվել ծայրահեղ աջ պոպուլիստական գաղափարախոսություն ունեցող սուբյեկտների վերհանումը եւ դրանց առանձին վերլուծությունը: Սակայն հիպերհղումների տեսքով տրված մեծ քանակի մեջբերումները թույլ են տալիս ընթերցողին ցանկության դեպքում տեսնել, թե ովքեր են մեջբերված տեքստերի, առանձին արտահայտությունների հեղինակները:

Հայաստանյան ԾԱՊ գերիշխող դիսկուրսի հիմնական թիրախները

Հետազոտված նյութերում հայաստանյան ծայրահեղ աջ պոպուլիստական դոմինանտ դիսկուրսի հիմնական թիրախների (չարիքի) դերում են՝ ՀՀ կառավարող ուժը, վարչապետը, 2018թ. հեղափոխությանը մասնակցած հանրությունը, «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցության ընտրողները, հավաքական Արեւմուտքը, միջազգային կազմակերպություններից եւ/կամ հավաքական Արեւմուտքի երկրներից դրամաշնորհներ ստացող հասարակական կազմակերպությունները, սեռական փոքրամասնությունները, ազատականները, պրոարեւմտյան կողմնորոշում ունեցող ուժերն ու քաղաքական, հասարակական գործիչները:

Հետազոտված նյութերում նշված առանձին թիրախները բնութագրվել են՝

- վիրավորական կոնոտացիայով որպես սեռական փոքրամասնության ներկայացուցիչներ՝ «*բազմասեռամոլ*», «*համասեռամոլ*»,
- ծայրահեղ բնույթի վիրավորական բառերով՝ «*տվարներ*», «*վիժվածքներ*»,
- անմարդկային, դաժան կամ անբարոյական, բացասական արժեքներ դավանող մարդուն բնորոշ հատկությունները ընդգծող պիտակներով (բառերով կամ արտահայտություններով)՝ «*գոնե մարդ լինեն*», «*սուտասան*», «*ծախվածներ*», «*սրիկաներ*», «*ժեխ*», «*փաբերից դուրս եկած անհայրենիք թշվառներ*», «*անասուն*», «*ոհմակ*», «*թափթփուկ*», «*արարած*», «*չարիք*», «*շերօօ*», «*աբիժնիկ*», «*խեղկատակ*»,
- հակադեմոկրատական, հակաժողովրդական, դիկտատորական խմբի անվամբ՝ «*խունտա*»,
- Էթնոնիմներով, որոնք առնվազն որոշակի հանրային շրջանակներում օգտագործվում են որպես հայհոյանք՝ «*թափառական բոշա*», «*Փաշողլու*», «*թուրքի մնացորդներ*», «*թուրքական էթոսի կրող*», «*թրքաքայլական դիվահար գոյանքներ*», «*յանիչարների ջոկատներ*»,
- մտածելու կարողություն չունեցող եւ կարգադրված, ծրագրավորված կյանք վարող մարդուն կամ խմբին բնութագրող զանգվածային մշակույթի պերսոնաժի կամ տերմինի միջոցով, հաճախ վիրավորական բնույթի բնութագրիչներով զուգորդված՝ «*մարդկային ամեն ինչը կորցրած անհույս զոմբիներ*», «*բիոմասսա*»,
- ձախողված եւ ազգային պետական շահը զիջող քաղաքական ղեկավարին բնորոշող բառեր-պիտակների ձեւով՝ «*կապիտուլյանտ*», «*հողատու*»,
- վիրավորական բառերի որոշ մասերի եւ վիրավորող անձի անվան որոշ մասերի համատեղման արդյունքում ստեղծվող բառերի ձեւով՝ «*նիկոլասուն*», «*փաշողլու*»,
- դրական կոնոտացիա ունեցող բառերի հականիշներ-պիտակներ տալու միջոցով՝ «*չհայ*», «*անսուրբ*», «*նեռի արժանավոր հոգեզավակ*», «*չարքի քաղցրալեզու հպատակ*», «*սորոսական սատանա*»,

- Արեւմուտքի երկրների գործակալ լինելու մասին ակնարկող եւ վիրավորական կոնոտացիա ունեցող բառեր-պիտակների միջոցով՝ *«գրանտակեր», «սորոսական», «աղանդավոր»,*
- վիրավորական կոնոտացիա ունեցող էվֆեմիզմների կամ կալամբուրների, նեոլոգիզմների միջոցով՝ *«նիկոյան պողոսիկներ», «գերագույն գլխավոր մանիպուլյանտ», «ուսապարկեր», «թուրքի մնացորդներ», «ռոբոտ* սպառող», *«նիկոլապաշտ», «օխլոս», «թրքահպատակ մնացած ընտրողներ», «ազգային զզվանքի սիմվոլ»:*

Հայաստանյան ԾԱՊ դիսկուրսի Էթնոնացիոնալիստական, նեյթիվիստական տարրերը

Հետազոտված նյութերում առկա են էթնոնացիոնալիստական, նեյթիվիստական հռետորաբանությանը բնորոշ մի շարք տարրեր, ինչպիսիք են՝

- սեփական էթնոսը որպես բացառիկ, բարոյական արժանիքներով օժտված, հատուկ առաքելություն ունեցողի ներկայացնելու միտումը՝

«Հարթնիր հանուն Հայաստանի, Արցախի, սփյուռքի եւ մեր տեսակի հարատեւության»,

«Ազգի արթնացման գրավականն ազգային հարուստ արժեքներն են, պատմությունը և քրիստոնեական արժեքները: Բարոյականությունը, ազգային արժեհամակարգերի պահպանումն ու քրիստոնեական արժեքները կմիավորեն և կգոտեպնդեն յուրաքանչյուր հայի, կստիպեն սթափվել և առաջ գնալավելի ուժեղ, ավելի հաստատակամ և ավելի մաքուր»,

«աստվածատուր պատգամ կա մեր ազգի համար»,

«Հայ կին լինելը՝ խաչ է ու մեծ պատասխանատվություն: Նա է հայի տեսակը պահել մաքուր ու անաղարտ: Ցավոք, այսօր տարվում է ուրիշ արժեքների ու ազատ բարքերի քարոզ: Հարկավոր է այստեղ էլ լուրջ հակակշիռներ ստեղծել, այլապես կկորցնենք մեր տեսակը: Ես ցանկանում եմ հայ կնոջը տեսնել՝ ուժեղ, կամային, պատվախնդիր ու արժանապատիվ: Ով կարող է պաշտպանել իրեն, զավակին ու երկիրը»,

«Մենք կներկայացնենք ձեր շահերը Ազգային ժողովում, որպես՝ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՇՏՊԱՆ»,

«Հայ ժողովրդի ուժը հոգևոր արժեքների, բարոյական մաքրության և արժանապատվության, սփյուռքի համախմբման, ինչպես նաև միմյանց հարգելու կարողության մեջ է: Պետությունն ապահովում է հայ ավանդական ընտանիքի՝

որպես պետության կայունության և հայկական քաղաքակրթության բջջի պաշտպանությունն ու հզորացումը»,

«Պետությունը պետք է սահմանի հայ մարդու բացարձակ կերպարը և կրթական, մշակութային միջոցառումներով ազգաբնակչությանը տանում է դեպի այդ կատարելատիպը: Խոսքը գնում է կատարելության բացարձակության մասին, ինչպիսին պետք է լինի հայ մարդը»:

- Այլ, որոշակի էթնոս/ներին թիրախավորելու, դրանց բացասական հատկություններով օժտելու միտումը՝

«այս խունտան նույնիսկ թուրքին է գերազանցում իր անսրբությամբ»,

«ո՞վ կարող է հպարտանալ հայերի եւ Հայաստանի պարտությամբ՝ իհարկե թուրքը: Էլ ի՞նչ պետք է ասի եւ անի, որ բոլորին հասնի՝ Նիկոլի թիմը թուրքերի թիմ է թուրքի գլխավորությամբ»,

«Մեր նահատակների մարմինների հետ Թուրքի սոյն դաշնակիցները վարուում են աղբի նման, որովհետեւ եթէ մի նշոյլ մարդկութիւն կամ Հայի հոգի ունենային իրենց մէջ, նրանց նահատակեալ սուրբ մարմինների հետ աղբի նման չէին վարուի»,

«Անհայրենիք, թափառական բոշաները»:

- Վերազգային, միջազգային կառույցները, միջազգային պայմանագրերը եւ փաստաթղթերը որպես էթնիկ իդենտիկության, ավանդական արժեքների, ավանդական ընտանիքի համար սպառնալիք ներկայացնելու միտումը՝

«Միջազգային կառույցների հետ համագործակցությունը կարող է սահմանափակվել, եթե այն վտանգ է ներկայացնում հայ ժողովրդի ազգային ինքնությանը»,

«Այդ առումով, Կուսակցության համար մերժելի է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան (ստամբուլյան կոնվենցիան): «Երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանության մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան նույնպես մտահոգության տեղիք է տալիս, երեխաներին սեռական կրթություն տրամադրելու մասով: *Մանկությունն ավարտվում է այն պահից, երբ երեխան սեռական ճանաչողություն է ձեռք բերում»,*

«Փոքրիկ հրեշտակը սպանվեց, որովհետեւ Հայ էր. ձեր միջազգային հանրությունը լուռ հետեւեց, թե ինչպես են մանուկներն ու տակավին երիտասարդները մատաղ լինում դավաճանական պատերազմում»,

«Պետք է գան նոր, պրոֆեսիոնալ ուժեր, պետք է գան ազգային-պահպանողական ուժեր, ովքեր միշտ են պայքարել գլոբալիստների դեմ»:

- Հոգեւոր արժեքները, ավանդական ընտանիքը իբր վտանգված լինելու մասին ահազանգելը եւ վերջիններս ամրապնդելու, վերագտնելու մասին թեզը՝

«Հոգևոր անվտանգություն» հասկացությունն առաջին անգամ ներմուծելու ենք քաղաքական և իրավական դաշտ: «Հոգևոր անվտանգություն» ասելով՝ հասկանում ենք անհատի իրավունքը պաշտպանված լինելու երևույթներից, որոնք քայքայում, բարոյազրկում են հասարակությունը և առհասարակ հակասում են քրիստոնեական ու ազգային մեր հոգևոր ընկալումներին»,

«Հայ ընտանիքի բարոյական նորմերի պահպանման և նոր սերունդներին հայեցի դաստիարակություն տալու նպատակով: Անհրաժեշտ է ստեղծել Կրթության նախարարությանն ուղղորդող մարմին՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ: Կուսակցության ջանքերն ուղղված են լինելու ազգային ինքնության ճգնաժամի հաղթահարմանը, հայ ժողովրդի հավաքական հիշողության ու արժեհամակարգի ամրացմանը, ազգային միասնական ձգտումների սահմանմանը և հասարակական-քաղաքական օրակարգ դարձնելուն»,

«Բարձրաձայնված նպատակներին հնարավոր չի լինի հասնել, եթե հասարակությունում չկարևորվի ավանդական արժեքների դերը և նշանակությունը: Պետությունը պետք է պաշտպանի ընտանիքը և մանկությունը: Ընտանիքի ավանդական անդամների՝ տղամարդու և կնոջ միասնության խեղաթյուրման փորձը վտանգում է ընտանիք հասկացությունը»:

Հայաստանյան ԾԱՊ գերիշխող դիսկուրսի հակադեմոկրատական, հակաազատական տարրերը

Հետազոտված նյութերում նկատվել են նաեւ ավտորիտարիզմին, հակադեմոկրատական, հակաազատական դիսկուրսին բնորոշ տարրեր՝

- խիստ քննադատական վերաբերմունք լիբերալ գաղափարախոսության, լիբերալիզմի ջատագովների նկատմամբ՝

«ԼՏՊ-ի մերձավորագույն կադրը նշանակում է ստանում սորոսալիբերալիզմի կարեւորագույն կենտրոն Կիեւում, եւ դա այն պահին, երբ ԼՏՊ-ն մերժում է կապիտուլյանտին»,

«Փաստացիորեն, խորհրդային արժեհամակարգից անցում կատարեցինք դեպի լիբերալ աշխարհայացքի: Իսկ այսօրվա պոստմոդերնիզմն ունի շատ «հետաքրքիր» կոդեր՝ այն մերժում է որեւիցե հեղինակություն, ավանդույթ, կայուն կապեր ու փոխհարաբերություններ, քարոզում է սպառողական հասարակություն, բաց ապրելակերպ, աշխարհաքաղաքացիություն: Այս «արժեքները» ներարկեցին մեր

հասարակության մեջ ու այսքանից հետո, եթե հունիսի 20-ին իշխանափոխություն տեղի ունենա, մենք առնվազն կարող ենք դրական միտումներ ակնկալել միայն տարիներ անց»:

- Դրական վերաբերմունք ավտորիտար պետությունների եւ կամ ավտորիտար համակարգի նկատմամբ եւ քննադատական վերաբերմունք դրանց քննադատողների, ժողովրդավարական ինստիտուտների նկատմամբ՝

«Նա իրականում կարծում էր, թե ինքը կարող է Պուտինին ձերբակալել, որովհետեւ ինքն իրեն երեւակայել էր «հեղափոխության առաջնորդ», «լեգիտիմ ղեկավար», «համաշխարհային դեմոկրատիայի դեմք»՝ Գանդիին ու Մանդելային հավասար, իսկ ՌԴ նախագահին համարում էր ավտորիտար, ուժային եւ այլն: Այսպիսի արժեհամակարգ ունեցող մարդիկ այսօր իշխանության, իսկ 2018-ից առաջ հենց իրենք էին ձվեր նետում ՌԴ դեսպանատան ուղղությամբ ու մեր երկրում հակառուսական քարոզչության ալիք բարձրացնում»,

«Երանի չէ՞ր ավտորիտար լինեինք… Այն ժամանակ քո նման պետականաքանդ ու պոտենցիալ կապիտուլյանտը ոչ միայն վարչապետի պաշտոն, այլ պատգամավորի մանդատն էլ երազում՝ նույնիսկ չէր տեսնի, իսկ Հայաստանն ու Արցախն էլ անդունդի եզրին չէին հայտնվի»,

«Քաղաքացիական հասարակությունը» հասկանալի է՝ դրանք իրենց շպիոններն են»:

Հայաստանյան ԾԱՊ գերիշխող դիսկուրսի պոպուլիստական տարրերը

Ուսումնասիրված նյութերում նկատվել է պոպուլիզմին բնորոշ բազմաթիվ տարրեր եւ առաջին հերթին նրա այն հիմնական գաղափարը, որ քաղաքականությունում մի կողմից բարոյական եւ անփոփոխ կամք ունեցող ժողովուրդն է, մյուս կողմից այդ ժողովրդի կամքի իրականացման դեմ հանդես եկող փչացած էլիտան, որի չեզոքացմամբ է միայն հնարավոր հասնել ժողովրդի կամքի իրականացմանը: Նյութերից շատերում հստակ ընդգծվում է Յան-Վերներ Մյուլերի կողմից նկատված պոպուլիզմի այն տարրը, որ նա ով չի սատարում պոպուլիստական կուսակցությունը՝ ժողովուրդ չի: Օրինակներ՝

«Իսկ մեր երեխաներն ապագա կունենան, անպայման կունենան, երբ սուտասան ու դավաճան վիժվածքները դադարեն լինել դրա թշնամին ու խոչընդոտը»,

«Նիկոլ Փաշինյանը չարիք է հայ ժողովրդի համար»,

«Սեփական աթոռը Հայրենիքից առավել սիրող այս կապիտուլյանտների իշխանությունը, ցավոք, չհեռացավ և ընտրեց հոգեբանական ծանր վիճակում գտնվող ժողովրդին նոր ցնցումների տանելու՝ արտահերթ ընտրությունների ճանապարհը, որին ի սկզբանե մենք դեմ էինք»,

«Արտաքին թշնամու դեմ խայտառակ պարտությունից հետո Նիկոլ Փաշինյանի առաքելությունը եղբայրասպան պատերազմն է, հայ հասարակության պառակտումն ու մեր ավանդական դաշնակիցների հետ հարաբերությունների իսպառ փչացումը, Բայց մեղավորը ժողովուրդը չէ»,

«Մի կողմում կա դավաճան կապիտուլյանտ՝ իր սպասարկուներով, իսկ մյուս կողմում՝ ժողովուրդ և առողջ քաղաքական դաշտի առաջատար ուժեր»,

«նիկոլիզմի երկրորդ ալիքից հետո՝ Հայաստան այլեւ չի լինի»,

«Եթե մեր երկրում կան այնքան թուրքեր, որոնք պետք է բավարարեն հիսունմեկ տոկոս ձայների քանակ, ուրեմն կանցնեն: Բայց ես լավատես եմ եւ հույս ունեմ՝ մեր երկրում հայեր են ապրում, ոչ թե թուրքեր, որ սատարեն դավաճանին»,

«Մի կողմում կա դավաճան կապիտուլյանտ, իսկ մյուս կողմում՝ ժողովուրդ»,

«Զգվանք,նողկանք և գարշանք կարող է առաջացնել նրա յուրաքանչյուր հիստերիկ ելույթ,նա դարձել է ազգային զզվանքի սիմվոլ, ինչից հայ ժողովուրդը շուտով վերջապես կազատվի»,

«Նա չպետք է մեռնի, այլ այնպիսի մի ցավ պետք է թափվի վրան, որ այնպես տանջվի, վառվի, ինչպես տանջեց հայ ժողովրդին»,

«Այսինքն նրանք պայքարում են տեղական կոռուպցիոներների ու ընդհանրապես կոռուպցիայի դեմ, որպեսզի կազմակերպեն ավելի մեծածավալ ու զանգվածային թալան, ավելի արագ ու էֆֆեկտիվ գրպանեն ժողովրդի ստեղծած բարիքները»:

Հայաստանյան ԾԱՊ գերիշխող դիսկուրսում առկա դավադրությունների տեսություններին բնորոշ նարատիվները

Ուսումնասիրված նյութերում մեծ տեղ ունեն ծայրահեղ աջ պոպուլիզմին բնորոշ դավադրությունների տեսությունները եւ կոնսպիրոլագիկան լեզուն: Հաճախ հայտարարվում է, որ ինչ-որ ուժեր թիրախավորել են եւ ցանկանում են ոչնչացնել ազգային ինստիտուտները: Օրինակներ՝

«Հայտնի և անհայտ ուժերի կողմից թիրախավորվել են մեր 4 հիմնասյուները (ընտանիք, եկեղեցի, բանակ և պետականություն)»,

«Թուրքիան և Ադրբեջանը քարոզչական տեխնոլոգիաներով, սորոսական կայքերով, սոցցանցերում ունեցած ազդեցությամբ, ամեն ինչ անելու են, որպեսզի Հայաստանում ազգային ընդդիմադիր ուժերը չգան իշխանության»,

«մեր հայտնի «Շակալի» գլխավորությամբ երկրի գլուխ անցավ մի մեծ գործակալական ցանց»,

«Մեզ համար հասկանալի էր, որ սա այլեւս ինչ-որ մեկի կողմից գրված սցենարի իրականացում էր, պատերազմի բեմականացում, որտեղ զոհերն ու հայրենիքի կորուստն էին իրական»,

«Արտաքին ուժերի, տարբեր հիմնադրամների եւ մասնագիտացված ռազմավարական կենտրոնների ազդեցությամբ՝ այն համառորեն փորձում է փոխել Հայաստանի քաղաքական վեկտորը, կտրել նրան ռուսական ազդեցության ծիրից»,

«Նման է, որ Լեւոնին խաղարկելով Նիկոլի եւ Լեւոնի տերերը փորձում են խանգարել «Հայաստան»-«Պատիվ ունեմ» ապագա կոալիցիայի կայացումը»,

«Դրա համար էլ թիրախում հայտնվեցին «Հայոց լեզու, «Հայոց պատմություն» եւ «Հայ եկեղեցու պատմություն» առարկաների դասավանդումը կրթական հաստատություններում»,

«90-ականների սկզբին ողջ Սովետական Միությունը երգում էր «Փոփոխությունների քամի» երգը, որը հետագայում պարզվեց՝ ստեղծվել է ամերիկյան հետախուզության «Մարտական պոեզիա» կոչվող հատուկ բաժնում: Եվ ահա այսօր մենք եւս արեւմտյան փափուկ ուժի զոհն ենք, որը օկուպացրել է Հայաստանը: Պետք է իրերն իրենց անուններով կոչել՝ ներկա իշխանությունն օկուպացիոն իշխանություն է»,

«Սկսած 2019 թվականի մայիսից մեր քաղաքական թիմը անընդհատ հայտարարում էր, որ Նիկոլը դրածո է ոչ հայանպաստ կենտրոնների կողմից, որ նա չարիք է բերելու և՛ Արցախին, և՛ Հայաստանին»,

«Արդյունքում, պայմանավորված և հաջողությամբ ձախողած պատերազմով հանձնեց Արցախի և Հայաստանի տարածքները»:

Հարկ է նշել, որ հետազոտված նյութերում Հայաստանի հասարակության առնվազն զգալի հատվածը ներկայացվում է որպես թշնամիների ազդեցության տակ, խաբված վիճակում գտնվող: Մյուս կողմից էլ, ժողովրդի մի մասը ներկայացվում է որպես «ոչ իսկական» ժողովուրդ, որպես չարիք՝ «օխլոս», «ժեխ», որին հակադրվում է «իսկական» ժողովուրդը՝ «հայրենասեր», «ազգային արժեքների կրող» եւ այլն: Օրինակներ՝

«Հա՞յ ես, թե՞ սեփական նախնիների հիշատակը անարգող նիկոլասուն»,

«Նախկիններից վախեցող թշնամու ստրու՞կն ես, թե՞ հայ հայրենասեր»,

«Կապիտուլյանտը այս դրոշը ֆռացնելով Հանրապետության հրապարակում, խնդրում է LGBT-ի համայնքին ընտրություններում իրեն սատարել: Վայ Հա՛յ ժողովո՛ւրդ դու էս ուր հասար»,

«Նիկոլականներն անկասկած ընտրելու են վարժեցրած արարածների նման միահամուռ, ցուցաբերելով ծայրահեղ ակտիվություն, լինելով աղանդավոր ու զոմբի»,

«Հրապարակ եկել եր ժեխը…ժեխը քայքայում է իմ ազգը ներսից, ժեխը կործանում է իմ ազգը, ժեխը բազմանում է»,

«նիկոլապաշտ օխլոս»,

«Սակայն ինչո՞ւ է հողատու վիժվածքը գնում այդ խելահեղության, ինչո՞ւ է նրան դեռեւս սատարող ֆանատների բիոմասսան անցել լրագրողների հետ զանգվածային հաշվեհարդարների»,

«Մեր մոլորված ժողովուրդն իր ձեռքով պատրաստվում է վավերացնել իր մահվան դատավճիռը, եթե մեզ չհաջողվի բեկում մտցնել ընտրապայքարի մեջ»,

«Նիկոլի կողմնակիցները աղանդավորներն ու համասեռամոլներն են եւ ներկա իշխանության մեջ գտնվող պարգեւավճարներ ստացողները, որոնք ազգ ու հայրենիք չեն ճանաչում»,

«Ու այդ զարհուրելի գործընթացը կարող է շարունակվել, եթե հայերի մեծամասնությունը չհասկանա, թե ինչպես են իրենց խաբում թշնամուն ծառայող գրանտակերները»:

Հայաստանյան ԾԱՊ գերիշխող դիսկուրսի հիմնական նարատիվը

Վերոնշյալ նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վերհանել ԾԱՊ հայաստանյան հիմնական նարատիվը եւ բացահայտել ծայրահեղ աջ պոպուլիստական հռետորաբանության հայաստանյան առանձնահատկությունները:

ԾԱՊ հետազոտված դիսկուրսի հիմնական թիրախներն են՝ թուրքերը, սեռական փոքրամասնությունները, լիբերալ աշխարհայացք ունեցողները, Արեւմուտքը, Թուրքիան, Ադրբեջանը, թավշյա հեղափոխության ջատագովները, Նիկոլ Փաշինյանը եւ «Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը» եւ վերջինիս էլեկտորատը:

Հայաստանյան ԾԱՊ-ի «մենք»-ի մեջ են ներառված նախկին իշխանությունների կողմնակիցները, պահպանողական էթնոազգայնականների այն հատվածը, որոնք դեմ են Փաշինյանի կառավարությանը եւ թավշյա հեղափոխությանը:

Հայաստանյան ԾԱՊ հիմնական նարատիվը կարելի է ձեւակերպել հետեւյալ կերպ՝

Արեւմուտքը (գլոբալիստները) ուղղակիորեն, ինչպես նաեւ անուղղակիորեն Թուրքիայի, Ադրբեջանի եւ ՀՀ ներկայիս իշխանությունների միջոցով, ցանկանում է կտրել Հայաստանը «հոգեւոր» եւ «եղաբայրական» Ռուսաստանից, թուլացնել վերջինիս դիրքերը տարածաշրջանում: Արեւմուտքը իշխանության է բերել Նիկոլ Փաշինյանին որպեսզի նա սոռոսական ցանցի միջոցով նաեւ հարվածի տակ առնի ազգային արժեքները, ավանդական ընտանիքը, եկեղեցին, ավիրի Հայաստանը եւ ոչնչացնի

հայկական ինքնությունը: «Իսկական» ժողովուրդը՝ հայրենասեր ազգային-պահպանողականների գլխավորությամբ ընտրությունների ինչպես նաեւ կոշտ փողոցային պայքարի միջոցով պետք է դուրս շպրտի «դավաճան» իշխանությանը եւ մերժի «սոռոսա լիբերալ ցանցը» եւ վերականգնի էթնոազգային հոգեւոր արժեքները, հայկականությունը:

Հակաժողովրդավարական տարբեր դրսեւորումների վերաբերյալ մոտեցումները միջազգային ասպարեզում

Այստեղ կներկայացնենք եւ կվերլուծենք հակաժողովրդավարական տարբեր դրսեւորումների, ծայրահեղ աջ տարատեսակ ուժերի եւ նրանց հիմնական գործիքների (ատելության խոսք, հակադեմոկրատական պրոպագանդա եւ այլն) եւ դրանց դեմ պայքարի վերաբերյալ միջազգային հանրության՝ ի դեմս տարբեր միջազգային կազմակերպությունների եւ որոշ եվրոպական երկրների մոտեցումները:

ԵԽԽՎ-ի մոտեցումները հակաժողովրդավարական էքստրեմիզմի եւ դրա դեմ պայքարի վերաբերյալ

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) «Եվրոպայում Ժողովրդավարությանը սպառնացող էքստրեմիստական կուսակցությունների եւ շարժումների մասին 2003թ. ընդունված բանաձևում նշվում է, որ անկախ իր բնույթից էքստրեմիզմը քաղաքական գործունեության այնպիսի ձև է, որը բացահայտ կամ քողարկված ժխտում է պառլամենտական ժողովրդավարության սկզբունքները եւ որը հիմնված է կսենոֆոբիայի, ծայրահեղ ազգայնականության, անհանդուրժողականության, օտարման գաղափարախոսության եւ պրակտիկայի վրա:

Փաստաթղթում նաեւ հիմնավորվում է, թե ինչու՞ է էքստրեմիզմը հատկապես վտանգավոր: Մասնավորապես նշվում է, որ ժողովրդավարական պետությունների համար վերջինս վտանգ է ներկայացնում այն պատճառով, որ նրանց ֆանատիզմը կարող է առիթ ծառայել բռնություն կիրառելու եւ բռնությունը արդարացնելու համար:

ԵԽԽՎ-ի բանաձևում նշված է եւս մի կարեւոր հանգամանք, որ եթե նույնիսկ էքստրեմիստները բռնություն չեն քարոզում նրանք ստեղծում են բռնության աճի համար նպաստավոր միջավայր, ինչն ուղղակի սպառնալիք է սահմանադրական կարգի համար: Բանաձևում նշվում է, որ պետությունները պարտավոր են չեզոքացնել էքստրեմիզմի ազդեցությունը ժողովրդավարական սկզբունքների եւ մարդու իրավունքների իրականացման վրա՝ օրենքի գերիշխանության պաշտպանության ուղղությամբ քաղաքական եւ ադմինիստրատիվ պատշաճ միջոցառումներ մշակելով եւ իրականացնելով:

Նշվում է նաեւ, որ պետությունները պետք է իրենց օրենսդրությունում էքստրեմիզմի դեմ պայքարելու նպատակով խոսքի ազատության, հավաքների ազատության, միավորումների ստեղծման ազատության սահմանափակման հնարավորություն ստեղծեն, սակայն այդպիսի միջոցները պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին:

Բանաձեւում մասնավորապես առաջարկվում է գործուն պատժի միջոցներ կիրառել այն դեպքում, երբ կան ապացույցներ էքստրեմիստական կուսակցությունների կամ նրա անդամների կողմից հասցրած վնասի մասին: Խրախուսվում է խիստ, սակայն համաչափ պատիժ կիրառել բռնության կոչերի, ռասայական խտրականության եւ անհանդուրժողականության նկատմամբ եւ այլն: Բանաձեւում նաեւ արդարացի է համարվում արտակարգ դեպքերում էքստրեմիստական կուսակցությունները եւ շարժումները արգելելու քաղաքականությունը եւ ընգծվում է, որ այդպիսին կարող է իրականացվել միայն սահմանադրության եւ օրենքների հիմա վրա՝ երկրի սահմանադրական կարգին սպառնալիքի առկայության դեպքում:

ԵԽԽՎ-ի վերոնշյալ բանաձեւում կարևորություն է տրվում քաղաքացիներին ժողովրդավարական ոգով դաստիարակելուն ուղղված դպրոցական ծրագրերի մշակմանը եւ ընդհանրապես նշվում է, որ կրթությունը եւ լուսավորչականությունը էքստրեմիզմի եւ խտրականության գաղափարախոսության նկատմամբ քաղաքացիների մոտ իմունիտետի ձեւավորման հիմնական եւ ամենավստահելի միջոցներն են:

ԵԱՀԿ-ի մոտեցումները հակաժողովրդավարական տարբեր դրսեւորումների եւ դրանց դեմ պայքարի վերաբերյալ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից հրապարակված եւ Վենետիկի հանձնաժողովի կողմից ընդունված «Քաղաքական կուսակցությունների գործունեության իրավական կարգավորման առաջնորդող սկզբունքները» փաստաթղթում մասնավորապես նշվում է, որ չի կարելի արգելել կամ ցրել կուսակցությունը միայն այն բանի համար, որ վերջինիս գաղափարախոսությունը բացասաբար է գնահատվում, ոչ պոպուլյար է կամ տհաճ: Նշվում է, որ եթե կուսակցությունը չի դիմում բռնությանը եւ չի սպառնում հանրային համերաշխությանը կամ պետության ժողովրդավարական սահմանադրական կարգին, ապա նրա արգելումը կամ ցրումը արդարացված չէ: Վենետիկի հանձնաժողովը նաեւ հավելում է, որ եթե կուսակցությունը հանդես է գալիս սահմանադրական կարգի ոչ բռնի փոփոխման համար ապա դա հիմք չէ վերջինս արգելելուկամ ցրելուհամար:

2015-ին հրապարակված «Մեդիա ազատության, մեդիա պրոպագանդայի հարցերով ներկայացուցիչը՝ մեդիա ազատության հարցերով ներկայացուցչի ԵԱՀԿ գրասենյակի ոչ պաշտոնական փաստաթղթում» տարբերակվում է երկու տեսակի պրոպագանդա՝ ա) պատերազմի եւ ատելության քարոզ, որի դեմ անհրաժեշտ է պայքարել միջազգային իրավունքի համաձայն օրենսդրական լուծումներով, բ) այլ տեսակի քարոզ, որն անպայման չէ խախտի միջազգային իրավունքը:

Նշվում է, որ շեշտադրումը արվում է «Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների միջազգային հռչակարգրի» (ICCPR) 19-րդ (արտահայտվելու իրավունք) եւ 20-րդ (պատերազմի քարոզի եւ ատելության դրդման արգելք) հոդվածների միջեւ հարաբերությունների վրա:

Մասնավորապես, անդրադառնալով Հարավսլավիայի պատերազմի ժամանակ պատերազմ քարոզող մեդիայի կործանարար դերին, զեկույցում նշվում է, որ մեդիան ընդամենը քաղաքականության գործիք էր եւ որ իրական պատասխանատվությունը քաղաքական գործիչներն են կրում:

Փաստաթղթում առանձին անդրադարձ է կատարվում ապատեղեկատվությանը, պրոպագանդային, ինֆորմացիոն պատերազմներին դիմակայելու խնդրին, նշելով, որ գրաքննությունը այդ երեւույթների դեմ պայքարելու ժողովրդավարական գործիք չէ:

Փաստաթղթում նշվում է, որ քննադատական լրագրության բացակայության պայմաններում դեմոկրատիան տուժում է եւ հատուկ մշակված ապատեղեկատվությունը ստանդարտ է դառնում: Ըստ փաստաթղթի հեղինակների՝ պրոպագանդայի հակաթույնը մեդիա բազմազանությունն ու ազատ մեդիան է, ինչպես նաեւ մեդիագրագիտության արշավները: Սակայն նշվում է նաեւ, որ որոշակի դեպքերում պրոպագանդան կարող է արգելվել (սահմանափակվել): Հղում անելով Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային կոնվենցիային, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային նշվում է, որ վերջիններս արգելում են պատերազմի պրոպագանդան եւ ատելության հրահրումը:

Վենետիկի հանձնաժողովի մոտեցումները հակադեմոկրտական տարբեր դրսեւորումների եւ դրանց դեմ պայքարի վերաբերյալ

Վենետիկի հանձնաժողովն իր «Քաղաքական կուսակցությունների արգելման եւ ցրման եւ նմանատիպ միջոցների վերաբերյալ կանոնակարգում» նշում է, որ քաղաքական կուսակցությունների արգելքը կամ նրանց հարկադիր ցրումը կարող է արդարացված լինել միայն այն դեպքում, եթե կուսակցությունները քարոզում են բռնություն կամ օգտագործում են բռնությունը որպես ժողովրդավարական սահմանադրական կարգը փոխելու քաղաքական միջոց՝ այդպիսով չեղարկելով սահմանադրությամբ երաշխավորված ազատություններն ու իրավունքները: Այստեղ նույնպես նշվում է, որ այն փաստը, որ կուսակցությունը կոչ է անում խաղաղ ճանապարհով փոխել սահմանադրությունը բավարար չէ կուսակցությունը արգելելու կամ ցրելու համար:

Հանձնաժողովը նաեւ նշում է, որ «Քաղաքական կուսակցությունը չի կարող պատասխանատվություն կրել իր առանձին անդամների վարքի համար, որը չի արտոնված կուսակցության կողմից իր քաղաքական/հանրային եւ կուսակցական գործունեության շրջանակներում» եւ հավելում, որ կուսակցությունների գործունեության արգելումը կամ նրանց ցրումը պետք է կիրառվեն ծայրահեղ դեպքերում: Նշվում է, որ բոլոր նման միջոցները պետք է հիմնվեն բավարար ապացույցների վրա, որ կուսակցությունը ընդհանուր առմամբ, այլ ոչ միայն նրա առանձին անդամները քաղաքական նպատակներ են հետապնդում՝ օգտագործելով

կամ պատրաստվելով օգտագործել միջոցներ, որոնք հակասում են սահմանադրությանը:

Փաստաթղթում նաեւ բերվում են կոնկրետ երկրների օրինակներ, որոնցում օրենսդրորեն առկա են կուսակցությունների գործունեության արգելքներ: Մասնավորապես նշվում է, որ Գերմանիայի Սահմանադրությունը նախատեսում է այնպիսի կուսակցությունների արգելում, որոնք իրենց նպատակներով կամ իրենց անդամների վարքով կարող են հանգեցնել ազատ դեմոկրատական սահմանադրական կարգի վիժեցմանը կամ նրա վերացմանը: Նշվում է, որ Պորտուգալիայի Սահմանադրությունը արգելում է ֆաշիստական եւ ռասիստական կուսակցությունները իսկ Լեհաստանում արգելված են այն կուսակցությունները, որոնց ծրագրերը հիմնված են նացիզմի, ֆաշիզմի եւ կոմունիզմի տոտալիտար մեթոդների եւ կանոնների վրա, ինչպես նաեւ այն կուսակցությունները, որոնց ծրագրերն ու գործունեությունը հիմնված են ռասայական եւ ազգայնական ատելության վրա: Նշվում է, որ Ավստրիայում, որտեղ նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունը եւ նրա կազմակերպությունները արգելվել են հատուկ օրենքով, գոյություն ունի դրանք վերակազմավորելու արգելք: Ֆրանսիայում կուսակցությունները կարող են արգելվել, եթե քարոզում են խտրականություն, ատելություն եւ բռնություն անձի կամ անձանց խմբի նկատմամբ վերջիններիս ծագման հիմքով կամ եթե դրանք չեն պատկանում որոշակի էթնիկ խմբի, ազգի, ռասայի կամ կրոնի, կամ եթե կուսակցությունները տարածում են գաղափարներ եւ տեսություններ, որոնք արդարացնում են կամ խրախուսում են նման դիսկրիմինացիան, ատելությունը կամ բռնությունը: Փաստաթղթի հեղինակները նշում են, որ Իսպանիայում համանման մոտեցում է, սակայն ազգային եւ կրոնական պատկանելիության գործոնից բացի այդ երկրի օրենքը խտրականության հնարավոր պատճառների ցանկում նաեւ նշում է սեռը, սեռական կողմնորոշումը, ընտանեկան դրությունը, հիվանդությունները եւ ֆիզիկական թերությունները:

Թեեւ ինչպես արդեն նշվել է եվրոպական ընդանուր մոտեցումն այն է, որ գրաքննությունը այն գործիքը չէ, որի միջոցով պետք է պայքարել ինֆորմացիոն հարձակումների, պրոպագանդայի դեմ, սակայն որոշակի դեպքերում կոնկրետ լրատվամիջոցների հեռարձակման արգելումը եվրոպական կառույցների կողմից արդարացված է համարվում: Օրինակ, Եվրոհանձնաժողովը 2015թ. հիմնավոր եւ Եվրամիության օրենսդրությանը համահունչ է համարել Լիտվայի որոշումը երեք ամսով կասեցնել «РТР Планета» ռուսական հեռուստաընկերության հեռարձակումը Լիտվայի տարածքում: Նման որոշման հիմնավորումը այն է, որ հեռարձակվող ծրագրերը ատելություն եւ բռնություն էին հրահրում ուկրաինացիների նկատմամբ:

Հակաժողովրդավարական խմբերի նկատմամբ վերաբերմունքը Գերմանիայում

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում հակաժողովրդավարական դրսեւորումների դեմ պայքարի Գերմանիայի օրինակը, որը նաեւ դատական գործընթացների հարուստ

փորձ ունի հակաժողովրդավարական խմբերի եւ կուսակցությունների դեմ պայքարի կոնտեքստում:

Գերմանիայի դաշնության Սահմանադրական դատարանը 1952-ին արգելել է Ռեյխի Սոցիալիստական կուսակցության (*Sozialistische Reichspartei*) գործունեությունը: Դատարանի վճռում հղում է արվում պետության հիմնարար օրենքի այն դրույթին, որ ազատորեն կուսակցություն հիմնելու եւ գործունեություն ծավալելու դրույթը չի վերաբերում այն կուսակցություններին, որոնք չեն ընդունում ժողովրդավարության ֆունդամենտալ սկզբունքները եւ ձգտում են ոտնահարել ֆորմալ ժողովրդավարական գործիքները ազատ ժողովրդավարական կարգը վերացնելու նպատակով:

Դատարանի վճռում նաեւ նշվում է, որ Ռեյխի սոցիալիստական կուսակցությունը օգտագործելով նացիոնալ-սոցիալիստական շրջանի բառապաշարը ընդդեմ Դաշնային հանրապետության եւ նրա պաշտոնյաների զրպարտության եւ կեղծիքների է դիմում: Ընդգծվում է, որ ակնհայտ են կուսակցության հակասեմականությունը եւ ընդդիմախոսների նկատմամբ ահաբեկչական միտումները: Դատարանը հատուկ նշում է, որ կուսակցության ծրագրում չկա ժողովրդավարության նկատմամբ պարտավորվածություն, իսկ կուսակցության պրոպագանդան հիմնված է հիտլերյան սկզբունքների եւ մեթոդների վրա: Նշվում է նաեւ, որ զանգվածային ցույցերը իրենց ամեն ինչով այնպիսի տպավորություն են թողնում կարծես Նացիոնալ-սոցիալիստական աշխատավորական կուսակցության ցույցերը լինեն:

Ի տարբերություն վերոնշյալ քեյսի, երբ դատարանը արգելել է ակնհայտ հակաժողովրդավարական բնույթ ունեցող կուսակցության գործունեությունը, Գերմանիայի Նացիոնալ-Դեմոկրատական կուսակցության (ՆԴԿ) գործունեուությունը, թեեւ վերջինիս նույնպես ակնհայտ հակաժողովրդավարական բնույթի է, չի կասեցվել:

Գերմանիայի բարձր դատարանը մասնավորապես նշել է, որ կուսակցությունը այնպիսի կոնցեպտ է ընդունել, որի նպատակն է գոյություն ունեցող ազատ դեմոկրատական հիմնարար կարգը վերացնելը: Սահմանադրական դատարանի վճռում նշվում է, որ կուսակցությունը մտադիր է փոխարինել գործող սահմանադրական համակարգը էթնիկապես սահմանված ժողովրդական համայնքի գաղափարի վրա հիմնվելիք ավտորիտար ազգային համակարգով: Վճռում նշվում է, որ կուսակցության քաղաքական հայեցակարգը անհարգալից է վերաբերվում մարդկային արժանապատվությանը եւ անհամատեղելի է ազատ դեմոկրատական հիմնարար կարգի հետ: Բացի այդ, ընդգծվում է, որ ՆԴԿ-ն համակարգված եւ սիստեմատիկ ջանքեր է գործադրում դեմոկրատական կարգի տապալմանն ուղղված իր այդ նպատակներին հասնելու համար:

Սակայն, այդքանով հանդերձ, բարձ դատարանը նշել է, որ տվյալ պահին բացակայում են ծանրակշիռ եւ կոնկրետ վկայություններ առ այն, որ կուսակցությունը կհաջողի իր նպատակներին հասնելու գործողություններում: Այդ իսկ պատճառով Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանը մերժել է Բունդեսռատի դիմումը ՆԴԿ-ն հակասահմանադրական ճանաչելու առաջարկով: Դատարանը նաեւ մեկ այլ ուշագրավ միտք է հայտնել, նշելով, որ կուսակցության կամ նրա անդամների հակահիրավական գործողություններին պետությունը պետք է հակազդի ոստիկանական օրենքի եւ քրեական օրենսգրքի միջոցներով:

Այսինքն, ըստ էության, Դատարանն իր վերոնշյալ վճռով ասում է, որ քանի դեռ կուսակցության, նույնիսկ ակնհայտ ագրեսիվ, հակաժողովրդավարական գործունեությունը սահմանադրական կարգի տապալման տեսակետից իրական վտանգ չի ներկայացնում, ապա չպետք է ցրել կուսակցությունը կամ դադարեցնել նրա գործունեությունը, իսկ եթե կոնկրետ հակահիրվական գործողություններ են կատարվում կուսակցության կամ նրա անդամների կողմից, ապա դրանցով պետք է զբաղվեն իրավապահ մարմինները՝ խստորեն կիրառելով օրենքը:

Հարկ է նշել, որ կուսակցությունների արգելման պրակտիկան, այնուամենայնիվ, տարածված է եվրոպական երկրներում: Ինչպես նշվում է, օրինակ, «Մարտնչող ժողովրդավարության քարտեզագրումը. եվրոպական ժողովրդավարություններում կուսակցությունների արգելման վարիացիաները (1945-2015) աշխատությունում հետազոտված եվրոպական երկրների մեծ մասում առկա է գաղափարախոսական հիմքերով կուսակցության արգելման քաղաքականություն:

Ատելության խոսքի վերաբերյալ միջազգային կազմակերպությունների մոտեցումները

Առանձին ուշադրության է արժանի հակաժողովրդավարական, այդ թվում՝ ծայրահեղ աջ պոպուլիստական խոսույթի անբաժան մաս կազմող ատելության խոսքի վերաբերյալ միջազգային կառույցների մոտեցումները: 2015թ. ընդունված «Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի ընդհանուր քաղաքականության թիվ 15 հանձնարականում» նշված է, որ *«ատելության խոսքը պետք է ընկալվի որպես անձի կամ անձանց խմբի նկատմամբ նվաստացման, ատելության կամ անարգման, ինչպես նաև այդ անձանց կամ խմբի նկատմամբ ցանկացած ոտնձգության, վիրավորանքի, բացասական կարծրատիպերի ձևավորման, խարանի կամ սպառնալիքի քարոզչությունը, խթանումը կամ որևէ ձևով հրահրումը և արտահայտման վերոնշյալ բոլոր ձևերի արդարացումը «ռասայի», մաշկի գույնի, ծագման, ազգային կամ էթնիկ պատկանելության, տարիքի, հաշմանդամության, լեզվի, կրոնի կամ համոզմունքի, սեռի, գենդերի, գենդերային ինքնության, սեռական, կողմնորոշման և այլ անձնական հատկանիշների կամ կարգավիճակի հիմքով»:*

Ատելության խոսքին վերաբերվող ՄԱԿ-ի ռազմավարական պլանի եւ գործողության փաստաթղթում ատելության խոսքը սահմանվում է հետեւյալ կերպ՝ *«բանավոր խոսքում, գրավոր խոսքում, վարքում դրսեւորվող ցանկացած տեսակի հաղորդակցություն, որը թիրախավորում է կամ օգտագործում է ստորացուցիչ կամ խտրական լեզու՝ անձի կամ խմբի վերաբերյալ հաշվի առնելով այն, թե ովքեր են նրանք, այլ կերպ ասած՝ ելնելով իրենց կրոնից, էթնիկ պատկանելությունից, ազգությունից, ցեղից, մաշկի գույնից, ծագումից, սեռից կամ ինքնության այլ գործոնից»:*

Վերոնշյալ սահմանումներից ակնհայտ է դառնում, որ միջազգային կառույցների մոտեցումն այն է, որ ատելությամբ լցված, վիրավորող բնույթ ունեցող ոչ բոլոր խոսքերը պետք է համարել «ատելության խոսք»: Որպեսզի համապատասխան խոսքը դիտարկվի որպես «ատելության խոսք» այն պետք է մարդուն կամ խմբին թիրախավորած լինի ըստ նրա ինքնության որեւէ հատկանիշի, լինի դա մաշկի գույնը, սեռը, կրոնա-փիլիսոփայական համոզմունքները եւ այլն: Այդ իսկ պատճառով ատելության խոսքը առանձնահատուկ վտանգավոր է ժողովրդավարական հասարակության համար:

Կարող ենք եզրակացնել, որ ատելության խոսքը թիրախավորում է լիբերալ-ժողովրդավարական այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ բազմազանությունը եւ պլյուրալիզմը: Ատելության խոսքը վտանգավոր է նաեւ նրանով, որ հակաժողովրդավարական գաղափարախոսություն ունեցող անհատներին եւ խմբերին, այն պատճառով, որ նրանք հաճախ հանդես են գալիս սկանդալային հայտարարություններով եւ ցուցաբերում են էքսցենտրիկ, ուշադրություն գրավող վարք, դուրս է բերում լրատվամիջոցների առաջին էջեր՝ դարձնելով նրանց հանրային-քաղաքական օրակարգի վրա ազդեցություն ունեցող սուբյեկտներ: Եվ վերջապես, ատելության խոսքը կարող է դրդել տարբեր ծայրահեղական խմբերին եւ անհատներին բռնություն գործադրել, թշնամանք եւ խտրականություն հրահրել այդպիսի խոսքի թիրախ հանդիսացող անձերի եւ խմբերի նկատմամբ:

Ատելության խոսքի դեմ պայքարի օրենսդրական կարգավորումները ՀՀ-ում

Հայաստանում ատելության խոսքի դեմ պայքարի շրջանակներում վերջին շրջանում ընդունվել են բավականին խիստ օրենսդրական կարգավորումներ: Գործող ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված են խիստ պատիժներ (ընդհուպ մինչեւ անձի ազատազրկում) ատելության խոսքի որոշակի դրսեւորումների դեպքում: Մասնավորապես պատժելի արարք է համարվում *«Անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը…»:*

Վերոնշյալից երեւում է, որ Հայաստանի քրեական օրենսգքրում ատելության խոսքը բավականին լայն է սահմանված: Սակայն պարզ է դառնում նաեւ, որ քրեօրեն պատժելի է համարվում միայն այնպիսի ատելության խոսքը, որն իր թիրախների հանդեպ բռնություն գործադրելու հրապարակային կոչ է պարունակում կամ հրապարակայնորեն արդարացնում է բռնությունը կամ քարոզում է այն:

Սակայն 05.05.2021 ընդունված քրեական օրենսգրքում, որն ուժի մեջ է մտնելու 2022թ. հուլիսի 1-ից, քրեականացվել է փաստացի յուրաքանչյուր տեսակի ատելության խոսք: Նոր քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի համաձայն քրեական պատասխանատվություն է սահմանվում՝ *«Անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն»* ուղղված հրապարակային խոսքի, ինչպես նաեւ այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելու համար:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ատելության խոսքի դեմ արդյունավետ պայքարելու համար ՀՀ օրենսդրությունը առնվազն ընձեռելու է բավականին լայն հնարավորություններ:

Եզրակացություններ եւ առաջարկություններ

Հետազոտված ծայրահեղ աջ պոպուլիստական հայաստանյան դիսկուրսում առկա են ծայրահեղ աջ պոպուլիզմին բնորոշ հիմնարար տարրերը՝ նեյթիվիզմը, ավտորիտարիզմը, պոպուլիզմը: Ծայրահեղ աջ պոպուլիստական հայաստանյան դոմինանտ դիսկուրսի հիմնական թիրախներն են ՀՀ իշխանությունները, ՀՀ քաղաքացիական հասարակությունը, Արեւմուտքը, լիբերալ-դեմոկրատական արժեքները, «գլոբալիստական ուժերը», «թուրքերը»:

Վերոնշյալ հայաստանյան դիսկուրսին բնորոշ է վառ ընդգծված կոնսպիրոլոգիական հռետորաբանությունը:

Հայաստանյան ծայրահեղ աջ պոպուլիզի նարատիվներին բնորոշ են արեւելաեվրոպական ծայրահեղ աջ պոպուլիզմին բնորոշ մի շարք շեշտադրումներ: Մասնավորապես, ինչպես հայաստանյան, այնպես էլ արեւելյան եվրոպայի ԾԱՊ դիսկուրսում մեծ տեղ է հատկացվում այն գաղափարին, որ իրենց երկրներում հարվածի տակ են եւ վտանգված են «էթնիկ ինքնությունը», «ազգային արժեքները», «ավանդական ընտանիքը»: Սակայն հետազոտված հայաստանյան ԾԱՊ դոմինանտ դիսկուրսին առավել մոտ են Մոլդովայի եւ հատկապես Վրաստանի ԾԱՊ դիսկուրսները, որոնց նարատիվների մեծ մասը համընկնում է հայաստանյան համապատասխան դոմինանտ դիսկուրսի նարատիվների մեծ մասին: Մասնավորապես համընկնում են «ավանդական ընտանիքի» վտանգված լինելու, էթնիկ իդենտիկությունը վտանգված լինելու (Հայաստանի դեպքում նշվում է, որ ինքնությանը սպառնացող վտանգը գալիս է լիբերալ գլոբալիստներից եւ թուրքերից, իսկ Վրաստանի դեպքում՝ լիբերալ գլոբալիստներից եւ մուսուլմաններից) «սորոսականության», «գրանտակերության», «քաղաքացիական հասարակության Արեւմուտքից գնված լինելու» մասին, հակա ԼԳԲՏ-ական եւ այլ նմանատիպ նարատիվները: Հարկ է նաեւ նշել, որ հետազոտված հայաստանյան ԾԱՊ դիսկուրսում գերիշխում են պրոռուսաստանյան շեշտադրումները:

Հայաստանյան ծայրահեղ աջ պոպուլիստական դիսկուրսում մեծ տեղ ունի ատելության խոսքը: Եթե օրինակ արեւմտաեվրոպական եւ որոշ չափով արեւելաեվրոպական ծայրահեղ աջ պոպուլիստական դիսկուրսի մաս կազմող ատելության խոսքի թիրախում են հիմնականում էմիգրանտները, ապա հայաստանյան դիսկուրսի թիրախում են հիմնականում լիբերալ աշխարհայացքի տեր մարդիկ, «գլոբալիստները», ՀՀ իշխանությունները եւ նրա աջակիցները, թուրքերը եւ ադրբեջանցիները: Ըստ էության, հայաստանյան մեդիա միջավայրում տարածում ունեցող ատելության խոսքը մեծամասամբ թիրախավորում է մարդկանց եւ խմբերին ըստ նրանց քաղաքական հայացքների եւ աշխարհայացքի կամ

գաղափարախոսության: Ատելության խոսքը մեծամասամբ կառուցված է ծայրահեղ բնույթի հայհոյանքների վրա:

Հակաժողովրդավարական դրսեւորումների վերաբերյալ միջազգային կառույցների եւ որոշ եվրոպական երկրների մոտեցումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեեւ ծայրահեղ աջականությունը եւ նրա տարբեր դրսեւորումները եւ գործիքները համարվում են առնվազն ժողովրդավարությանը վնասող, սակայն գոյություն ունի տարբերակված մոտեցում նրա տարբեր դրսեւորումների վերաբերյալ:

Որպես կանոն, եվրոպական կառույցների եւ պետությունների կողմից կուսակցությունների կամ այլ խմբերի նկատմամբ խիստ, պատժիչ, արգելող մոտեցումների կիրառումը արդարացված է համարվում այն պարագայում, երբ նրանք իրական, ապացուցելի վտանգ են ներկայացնում ժողովրդավարական կարգի համար:

Ատելության խոսքի վերաբերյալ գերիշխող համաեվրոպական մոտեցումն այն է, որ ատելության խոսք տարածող մարդկանց նկատմամբ հարկ է կիրառել խիստ սանկցիաներ՝ առնվազն մասամբ քրեականացնելով ատելության խոսքը:

Միջազգային կառույցների դիրքորոշումն այն է, որ բացի վերոնշյալ միջոցներից հակաժողովրդավարական, հակազատական երեւույթների դեմ արդյունավետ պայքարի միջոցներից են՝ ժողովրդավարական կրթությունը, մեդիայում էթիկական նորմերի ներմուծումն ու դրանց խստացումը, փաստերի ստուգման նախաձեռնությունները, տարբեր հարթակներով ժողովրդավարական նարատիվների տարածումը եւ, բնականաբար, երկրներում ժողովրդավարության, ժողովրդավարական ինստիտուտների, քաղաքացիական մշակույթի ամրապնդմանն ուղղված համալիր միջոցառումները:

Հաշվի առնելով միջազգային փորձը եւ ուսումնասիրված ծայրահեղ աջ պոպուլիստական դիսկուրսի հայաստանյան առանձնահատկությունները առաջարկում ենք՝

Կրթության ոլորտի պատասխանատուներին

- փորձագիտական եւ ակադեմիական հանրության հետ համագործակցաբար մշակել դեմոկրատիայի, սահմանադրական կարգի վերաբերյալ դասախոսությունների հատուկ կուրս բարձր դասարանի աշակերտների, ինչպես նաեւ ԲՈՒՀ-երի առաջին կուրսեցիների համար: Կուրսը կարող է ներառել՝ դեմոկրատիայի վերաբերյալ գիտական աշխարհում հեղինակավոր տեսաբանների եւ հետազոտողների աշխատությունների էական տարրերի ներկայացումը, դեմոկրատիզացիայի գործընթացի տարբեր երկրների փորձը՝ ընտրված քեյս ստադիներ, դեմոկրատական երկրների ներքին սոցիալ-քաղաքական կյանքի, դեմոկրատական ինստիտուտների գործառնության վերաբերյալ պատմություններ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դեմոկրատական ազատություններին վերաբերող կարեւորագույն վճիռների ներկայացումը,

- մշակել դեմոկրատիային սպառնացող երեւույթների՝ այդ թվում ծայրահեղ աջ պոպուլիզմի վերաբերյալ դասախոսությունների շարք, որը նախատեսված կլինի ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ կրթություն իրականացնող հարթակների համար:

Գործադիր եւ օրենսդիր իշխանության իրավական բլոկի պատասխանատուներին

- Միջազգային գործընկերների եւ քաղաքացիական հասարակության հետ համագործակցաբար ստեղծել մոնիտորինգի խումբ, որի նպատակը կլինի՝ ա) հայաստանյան մամուլում հակադեմոկրատական, ծայրահեղ աջ պրոպագանդայի հայտնաբերումը, բ) ատելության խոսքի հայտնաբերումը, գ) հայաստանյան սոցիալ-քաղաքական կյանքում ծայրահեղ աջ, հակաժողովրդավարական վարքի օրինակները: Դրանց կողմից ՀՀ սահմանադրական կարգին պոտենցիալ սպառնալիքի առկայության դեպքում մոնիտորինգի խումբը կարող է համապատասխան մարմիններին ներկայացնել հիմնավորումներ համապատասխան իրավական գործընթաց սկսելու համար:

Քաղաքացիական եւ փորձագիտական հանրությանը

- Ստեղծել ծայրահեղ աջ դրսեւրումների հայտնաբերման եւ հետազոտման նպատակով փորձագիտական խմբեր,
- մեդիայի եւ ոչ ֆորմալ կրթության ծրագրերի միջոցով ակտիվորեն տարածել ժողովրդավարական նարատիվներ,
- հանդես գալ Հայաստանում «Նոր դեմոկրատիաների ներքին եւ արտաքին սպառնալիքները» խորագրով միջազգային կոնֆերանս կազմակերպելու նախաձեռնությամբ: